

**Ագրոօդերևութաբաղադրական տեղեկատվություն  
(2003թ. հունվար –մարտ )**

Հունվարի միջին ջերմաստիճանը հանրապետության տարածքի գերակշիռ մասում նորմայից բարձր էր 2-4 աստիճանով: Նորմայից ցածր ջերմաստիճաններ դիտվեցին հունվարի երկրորդ և երրորդ տասնօրյակներում: Հունվարն առանձնացավ նաև տեղումների սակավությամբ: Ամսական տեղումները Տավուշում կազմեցին նորմայի 30-35 տոկոսը, Լոռիում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքում` 55-80 տոկոսը: Հունվարի երկրորդ տասնօրյակում ցածր ջերմաստիճանի պայմաններում բավարար ձնածածկույթի պարագայում ստեղծվեցին աշնանացանի ձմեռման բավարար պայմաններ` թփակալման հանգույցում դիտվեց -3...-5 աստիճան: Միայն Մերձավանում այն հասավ -7 աստիճանի, ինչը վտանգավոր է թերզարգացած աշնանացանի համար: Առանձին Լեռնային շրջաններում դիտվեցին պտղատու ծառերի համար վտանգավոր ջերմաստիճաններ`-26...-29 աստիճան:

Փետրվարի առաջին տասնօրյակում դիտվեց նորմայից 5-7 աստիճանով բարձր ջերմաստիճան, իսկ տեղումները կազմեցին նորմայի 25-80 տոկոսը: Ամենաշատ տեղումներ դիտվեց Յանքերդում, Գորիսում, Հրազդանում, Ապարանում, Ամասիայում, Աշոցքում (նորմայի 80-190 տոկոսը), իսկ Արարատյան դաշտում և Սյունիքի ցածրադիր գոտում տեղումներ ընդհանրապես չդիտվեց: Փետրվարին աշնանացանները գտնվել էին ձմեռային հանգստի շրջանում: Գրանցվեց ձմեռման համար բավարար պայմաններ: Լեռնային շրջանների մեծ մասում աշնանացանները ծածկված էին բավարար ձնածածկույթով: Հողի 3 սմ շերտում նվազագույն ջերմաստիճանը չգերազանցեց -4...-6 աստիճանը:

Մարտին միջին ամսական ջերմաստիճանը ցածր էր նորմայից 2-3 աստիճանով: Խիստ ցածր ջերմաստիճան գրանցվեց մարտի սկզբին և վերջին: Այսպես. Լեռնային և Նախալեռնային շրջաններում միջին օրական ջերմաստիճանը ցածր էր նորմայից 10-15 աստիճանով, իսկ հովտային շրջաններում` 7-9 աստիճանով: Մարտն առանձնացավ տեղումների առատությամբ: Գրեթե ամենուրեք տեղումների քանակն ավել էր նորմայից 1.5-2.5 անգամ: Առատ տեղումները խանգարեցին ինչպես զարնանացանին, ծաղկած այգիների փոշոտմանը, ջերմասեր մշակաբույսերի սածիլմանը, այնպես էլ` գյուղատնտեսական աշխատանքներին` նվազեցնելով պրոֆիլակտիկ միջոցառումների արդյունավետությունը: Լեռնային և Նախալեռնային շրջաններում աշնանացանը գտնվում էր ձմեռային հանգստի շրջանում: Սակայն որոշ շրջաններում (Ապարան, Հրազդան) բավականին բարձր ձնածածկույթը կարող է վնասել աշնանացանին զարնան ձմեռալի ժամանակ:

Ընդհանուր առմամբ եղանակային պայմանները բավարար էին աշնանացանի ձմեռման համար, գրեթե ամենուրուրեք այն ծածկված էր հուսալի ձնածածկույթով (30-70 սմ), թփակալման հանգույցում հիմնականում -4...-5 աստիճանից ցածր չի գրանցվել: